

Նիւն Շարաշենիձէ

ՍԽԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՆՐԱՆՑ ՎՐԱ ԼԵԶՎԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Լեզու սովորելու ընթացքում սխալներն անխուսափելի են: Դրանք լեզվի յուրացմանն ուղեկցող երևոյթ է: Սովորելու լեզվով խոսելու կարողության զարգացումն անպայման սխալներ է հարուցում, որոնք պայմանավորված են տարբեր գործոններով՝ դժվար է սովորելու լեզվի հնչութաբանական կառուցվածքը լրիվ յուրացնել և այն իրացնել, արտասանական ապարատը հարմարեցնել նոր լեզվի տվյալներին, տեղի է ունենում նաև մայրենի լեզվի կադապարի մեխանիկական տեղափոխություն: Նոր լեզվական համակարգ, կամ տեղ է գտնում կառուցվածքի ոչ լրիվ յուրացում և ստացած գիտելիքի ոչ լիարժեք տեղափոխում պրակտիկա: Այս և բազմաթիվ այլ հարցեր առանձնապես ակներև են դասարանական աշխատանքի ժամանակ: Ինչպե՞ս պետք է վարվի ուսուցիչը: Առանց արձագանքի թողնի սխալները, թե՞ անմիջապես մատնացույց անի այն աշակերտին: Միայն ուղղի՞ սխալը, թե՞ դատի նրանցից յուրաքանչյուրի մասին: Ի՞նչ ժամանակ տրամադրի սխալների վերլուծությանը: Նոր նյութ սկսի, թե՞ շարունակի աշխատել այն նյութի վրա, որն աշակերտը դեռ չի յուրացրել այնպես, որ սխալ թույլ չտա: Բոլոր սխալներին արձագանքի ուսուցիչը, թե՞ ընտրությամբ դատի յուրաքանչյուրի մասին: Ի՞նչ ժամանակ տրամադրի սխալների վերլուծությանը, անհատապես պետք է տեղի ունենա

աշակերտների կողմից թույլ տրված սխալների վերլուծությունը, թե՞ այն դասարանական քննարկման առարկա պետք է դառնա: Այս հարցերը և նրանց պատասխանելն անչափ կարևոր են ուսումնական գործընթացը լիարժեք կառուցելու և դասի գործընթացի մեջ ուսուցչի գործողությունները ճիշտ վարելու համար:

Առաջին և կարևոր պայմանը, որ պետք է կատարվի, այն է, որ աշակերտն աշխատում է կառուցել հաղորդակցություն այն լեզվով, որը սովորում է և կարողանում է թեկուզ պարզ հաղորդակցվել, **չպետք է գնահատենք**, կամ այս դեպքում անսխալ խոսքը կամ սխալների վերլուծությունը չէ գլխավորը, այլ այն, որ ուսումնասիրվելիք լեզվով խոսելու ցանկություն առաջացնենք լեզու սովորողի /աշակերտի մեջ: Սա անչափ նշանակալի հոգեբանական գործոն է, քանի որ լեզու սովորելիս բոլորի մոտ զարգանում է նրա բարդոյթ, որ ինքը ոչ ճիշտ կամ ոչ լիարժեքորեն է հաղորդում միտքը: Եթե ուսուցիչն այս դեպքում արձագանքում է բոլոր սխալներին, ցանկալի արդյունքի փոխարեն, որ աշակերտն ազատ խոսի, հնարավոր է բոլորովին հակառակ արդյունքը ստանանք՝ աշակերտը կորցնի այդ լեզվով խոսելու ցանկությունը:

Ուշագրավ է այն, որ սխալները սպասելի են բոլոր մակարդակներում, սակայն տարբեր մակարդակներում սխալները տարբեր տեսակ կլինեն: Լեզու սովորելու հենց առաջին

աստիճանում առաջանում են արտասանական խնդիրներ: Սովորելու լեզվի հնչութաբանական կառուցվածքը միանգամից դժվար ընկալելու և արտաբերելու է: Առավել ևս սա վերաբերում է սպեցիֆիկ հնչյունների ճիշտ արտասանությանը: Հաջորդ փուլում ի հայտ են գալիս տարբեր տեսակի քերականական հարցեր: Մխալները մշտապես դրսևորվում են գրելու մեջ: Բոլոր այս հարցերը փուլերով և նպատակաուղղված պետք է մշակվեն: Մխալների վրա աշխատանքը պետք է վերածվի ուսումնական գործընթացի անբաժանելի մասի: Լեզու սովորելիս սխալներն անխուսափելի են: Այսպիսով, ուսումնական գործընթացի ճիշտ պլանավորումը ենթադրում է սխալների վրա հատուկ աշխատանք: Իսկ այսպես պլանավորված գործունեությունը հիմք կդառնա, մի կողմից՝ լեզվի հաղորդակցական գործառնության զարգացման, իսկ մյուս կողմից՝ այն կզարգացնի և կբարձրացնի լեզվի ակադեմիական տիրապետման մակարդակը:

Մխալների վրա աշխատանքն արտասանության մեջ

Արտասանական խնդիրները գլուխ են բարձրացնում լեզվի ուսուցման հենց առաջին օրվանից, սակայն դրանք կարճ ժամանակում չեն ուղղվի, որքան էլ հզորացված և ինտենսիվ աշխատանք անցկացվի այս ուղղությամբ: Լեզվի իմացության մակարդակի բարձրացման հետ նվազում են նաև արտասանական խնդիրները, սակայն այն միշտ կարող է մնալ հնչերանգի ձևով, կամ լիարժեքորեն ճիշտ արտասանություն երբեք չիրականացվի: Որքանով որ սա կարող ենք քննարկել որպես հստակ անհատական յուրահատկությունների և կարողությունների դրսևորում, այնքանով նրա լրիվ հաղթահարումը կարող ենք վստահել միայն անհատի հնարավորություններին: Որոշ անհատներ բնական լսողության և այլ կարողությունների և հմտությունների հետևանքով լեզվի յուրացմանը զուգահեռ կարողանում է լիարժեքացնել արտասանական ապարատը և առանց ակցենտի խոսել, իսկ ոմանց համար սա դառնում է մշտական հատկանիշ, թեպետ կարող է նրա

լեզվական իրազեկությունը բարձր էլ լինել: Այսպիսով, արտասանական խնդիրների վերլուծության ժամանակ պետք է շեշտադրությունն արվի միայն հիմնական խնդիրների վրա: Ինչպես հայտնի է, հնչյունի կարևորագույն հատկանիշը նրա իմաստատարբերակիչ գործառնությամբ է՝ հնչյունների հերթագայությամբ կարող ենք ստանալ բոլորովին տարբեր իմաստով բառ: Այդ պատճառով լեզու սովորողների մոտ առանձնապես պետք է ուշադրություն դարձվի ման հիմնախնդիրներին լեզվում և դրանց մասին հատուկ վարժություններ կազմվեն, որպեսզի արտասանական խնդիրը չվերածի լեզվական հիմնախնդրի: Դրա համար.

- Հատուկ կազմվի սովորելու լեզվի հնչութաբանական կառուցվածքը՝ սովորողի **մայրենի լեզվի հետ հարաբերությամբ** և առանձնացվեն առանձնահատուկ հնչյունները: Այս հնչյունների կիրառությամբ կազմվեն նախադասություններ և փոքր չափսի պարզ, ոչ ավթենտային տեքստեր, որոնք կօգտագործենք ինչպես արտասանական նպատակների, այնպես էլ թելադրելու և գրելու համար: Յուրաքանչյուր ազգային խմբի համար պետք է սահմանվեն սխալների հնարավոր տեսակները: Օրինակ՝ թուրքալեզու և ադրբեջանալեզու աշակերտները, ինչպես նաև եվրոպական լեզուների ներկայացուցիչների մեծ մասը դժվարանում են վրաց լեզվի խուլ բաղաձայներն արտասանել, ինչպիսիք են՝ Յ, Ծ, Ե-ն, ռուսալեզու սովորողը կդժվարանա արտասանել շնչեղ խուլեր **ջ, տ, յ**-ն: Նաև դժվար է բարդ հնչյուններն (**ժ, Զ, Ծ, Ծ, Կ, Զ**) արտասանել վերոթվարկյալ լեզուների ներկայացուցիչների համար, սակայն հայալեզու աշակերտների համար սա չի հանդիսանում առանձնահատուկ հիմնախնդիր: Վրացերենի համար սպեցիֆիկ է լեզվարմատային **յ**

բաղաձայնը և նրա ճիշտ արտասանությունը երկարատև, հնարավոր է անհաղթահարելի խնդիր մնա վարց լեզուն սովորողների համար: Այսպիսով, այս խնդիրների վրա անպայման պետք է ուշադրություն կենտրոնացվի, սակայն լիարժեք արտասանության ցանկությունը չպետք է խափանի լեզվի ուսուցման գործընթացը և ոչ էլ լեզու սովորողի մոտ պետք է առաջանա այնպիսի տրամադրվածություն, որ սա անհաղթահարելի պրոցես է: Եթե սխալները չեն փոխում բառի իմաստը, դրանց վրա հատուկ ուշադրություն կենտրոնացնելը ոչ էլ անհրաժեշտ է, քանի որ այսպիսի հիմնախնդիրները լեզվական իրազեկության ավելացման հետ աստիճանաբար կնվազեն:

- Առանձնացվեն այնպիսի հնչյունները, որոնց ոչ ճիշտ կիրառությունը կառաջացնի բառիմաստի փոփոխություն: Վրացերենի համար այսպիսիք են՝ **Յ - Ծ:** յայ - ծայ, յոր - ծոր, յար - ծար, յալ - ծալ... **Թ - Ծ:** տար - ծար, տարո - ծարո, տալ - ծալ... **Չ - Ծ:** չար - ծար, չարո - ծարո, չալ - ծալ... **Յ - Ծ:** յալ - ծալ, յար - ծար, յոր - ծոր, յարո - ծարո, յալո - ծարո... **Յ - Ծ:** յալ - ծալ, յար - ծար, յոր - ծոր, յարո - ծարո, յալո - ծարո... **Ծ - Ծ:** ծալ - ծալ, ծար - ծար, ծոր - ծոր, ծարո - ծարո, ծալո - ծարո... **Ծ - Ծ:** ծալ - ծալ, ծար - ծար, ծոր - ծոր, ծարո - ծարո, ծալո - ծարո... և այլն: Ցանկալի է, որ լեզու սովորողին, որպես ընթերցանության և արտասանության նյութ, նախօրոք մատուցենք այսպիսի բառեր, որպեսզի նա, մի կողմից՝ ուշադրությունը կենտրոնացնի նրանց ճիշտ արտասանության վրա, մյուս կողմից՝ ինքը գիտենա սպասելի սխալի գոյությունը: Այս բառերի կիրառությամբ ցանկալի է ստեղծվեն նախադասություններ կամ փոքր չափսի

տեքստեր, որոնք կարելի է օգտագործել ընթերցման, ունկնդրման և հասկանալու կարողության զարգացման, թվադրություն գրելու համար: Նպատակահարմար կլինի նաև մատուցել տեղադրման վարժություններ, որոնցում ինքը պետք է որոշի բառի համատեքստային նշանակությունը, և ինքն ընտրի տրված բառերից որևէ մեկը: Նշանակալի է նաև հատուկ նպատակով ստեղծված աուդիո նյութի մատուցումը կամ ուսուցչի կողմից արտաբերված առանձին բառերի և տեքստերի ցուցադրությունը:

- Պատրաստվեն հատուկ վարժություններ արտասանական ապարատի կատարելագործման համար, սրա համար հնարավոր է ընդունելի լինեն նաև շուտասելուկները, սակայն այստեղ պետք է նախատեսենք այն, որ շուտասելուկի բոլոր բառերը պետք է լինեն հեշտ բացատրելու և հասկանալի սովորողի համար:
- Ուսուցման գործընթացում ցանկալի է, որ ուսուցիչը նշի իր մոտ այն սխալները, որ արտասանության ժամանակ թույլ են տալիս աշակերտները և այնուհետև նրանց համար ստեղծի հատուկ վարժություններ: Այսպիսի վարժությունների հնարավոր տեսակների՝ ակներևություն, որի վրա տեղի կունենա ճիշտ և ոչ ճիշտ ձևերի սահմանազատում (ինչ է պատկերված նկարի վրա), ցուցադրման վրա հիմնվելով, կրկնություն, երգի կամ բանաստեղծության ձայնագրության ունկնդրում և այնուհետև աշակերտների կողմից նրա կրկնում ... Վերջինս հնարավոր է հաճախ ուսուցիչը կատարի՝ նրա կողմից կարդացված տեքստը կրկնում են աշակերտները:
- Գտնել նյութ (բանաստեղծություններ, երգեր...), որոնք պիտանի կլինեն արտասանական նշանակմամբ:

- Մեծ նշանակություն կունենա նաև մուլտիպլիկացիոն և գեղարվեստական ֆիլմեր տեսնելը՝ հատուկ հանձնարարություններով (օրինակ՝ հարց-պատասխան՝ ի՞նչ ասաց այս հերոսը, ի՞նչ պատասխանեց մյուսը ...)

Մխավների վրա աշխատանքը բանավոր խոսքում

Ինչպես արդեն նշվեց, ուսուցչի առաջնահերթ խնդիրն է, որ աշակերտի խոսքը չընդհատի թույլ տրված սխավների պատճառով: Սակայն միևնույն ժամանակ.

- Ուսուցիչն իր մոտ պետք է նշի սխավները:
- Ուսուցիչը պետք է կատարի սխավների դասակարգում:
- Պետք է որոշվեն սխավների տիպերը, կամ առանձնացվեն այն հարցերը, որոնց վրա ուշադրության կենտրոնացումը հնարավոր կլինի լեզվի տիրապետման կոնկրետ մակարդակների համար:
- Ստեղծվեն հատուկ վարժություններ, թեստեր՝ սպասելի սխավների ուղղման համար:
- Տարիքի և լեզվի տիրապետման մակարդակի համաձայն, պլանավորվեն աշխատանքներ դասարանում կատարելու համար (Ուսուցչի խոսքը, հատուկ բացատրությունը, վերլուծություն ...)

Աշխատանք քերականական սխավների վրա

Քերականական սխավների ուղղումն անչափ երկարատև գործընթաց է, և այն առանձնահատուկ աշխատանք է պահանջում ինչպես ուսուցչի, այնպես էլ լեզու սովորողի կողմից:

Ուսուցիչը պետք է իր մոտ նշի բոլոր այն սխավները, որ թույլ են տալիս աշակերտները բանավոր խոսքի կամ գրելու ժամանակ: Սակայն, բնական է, որ հնարավոր չէ բոլոր սխավները վերլուծել միաժամանակ, քանի որ այն պահանջում է ինչպես լեզվական իրազեկության որոշակի մակարդակ, այնպես էլ պետք է նկատի

առնվի տարիքային հարցը, քանի որ գոյություն ունեն սխավների մեխանիկական և գիտակցված հաղթահարման ուղիներ: Յանկայի է տարրական դասարանների աշակերտներին միշտ ճիշտ ձևը տալ՝ հաճախ արվող սխավների փոխարեն և առանց հատուկ վերլուծության հասնենք նրանց ուղղման: Տարիքային և լեզվական կողմերի աճի հետ մեկտեղ աստիճանաբար տեղի կունենա լեզվական կառուցվածքի և լեզվական մեխանիզմների իմաստավորում, և սխավների հիմնավոր վերլուծությունը միայն այդ ժամանակ իմաստ կունենա:

Քերականական սխավների վերլուծության ժամանակ նշանակություն է շնորհվում նրան, թե ինչն է առաջացնում նման սխավ: Այս դեպքում պետք է մի քանի ասպեկտ նախատեսենք՝ սխավը կարող է բխել մայրենի լեզվի զուգորդությամբ, քանի որ լեզու սովորողն անմիջապես տեղափոխում է իր լեզվին բնորոշ կառույցը սովորելու լեզվի մեջ, քերականական սխավները բխում են լեզվական իրազեկության ցածր մակարդակից, կամ ուսումնասիրվելիք լեզվի կառուցվածքի չիմացությունը կամ լեզվական մեխանիզմների չնախատեսելը:

Ինչպես պետք է աշխատենք քերականական սխավների վրա.

- Առաջին հերթին պետք է տեղի ունենա սխավների դասակարգում, օրինակ՝ սխավների դիմային ձևերի ճիշտ օգտագործման հարցում, բայի ժամանակաձևերի կազմության մեջ, սխավները բայական կառույցներում, կամ բայերի հետ կապված ձևերի ճիշտ օգտագործում, բարդ նախադասությունների կառուցվածքների կազմում թե այլ տիպի ...
- Յանկայի է, որ ստեղծվեն դիդակտիկ նյութեր՝ գծապատկերներ, աղյուսակներ ... որոնք արտացոլում են ինչպես սովորելու լեզվի առանձնահատկությունները, այնպես էլ կկատարեն սպասելի սխավների հակառակ ճիշտ ձևերի ակտիվացում:

- Պետք է ստեղծվեն հատուկ վարժություններ յուրաքանչյուր հարցի համար՝ տեղադրել, ճիշտ ձև ընտրել, խառը հաջորդականությունը դասավորել, բայի, նախադասության, տեքստի տեղափոխում այլ ժամանակի / դեմքի ձևի մեջ, հարց-պատասխան դիմային ձևերի ակտիվացմամբ, մինի երկխոսության կազմում՝ տրված ձևերի օգտագործմամբ, իրադրական խաղեր՝ սովորած ձևերի օգտագործմամբ, բացառությունների վրա հատուկ աշխատանք և այլն ...
 - Տրված ձևերի օգտագործմամբ կազմել նախադասություններ կամ տեքստ:
 - Տեղեկության կրկնություն և նոր նախադասության/ տեղեկության ավելացում:
 - Երկխոսության կազմում՝ տրված կամ քննարկվելիք ձևերի կիրառությամբ (աշխատանք գույգերով)...
- Քերականական սխալների վրա աշխատելու արդյունավետ ուղի է լեզու սովորողներին **գործնական քերականության** հարցերի մատուցումը: Այն առանձնահատուկ կերպով բացահայտում է քերականության գործնական նշանակությունը և միևնույն ժամանակ զարգացնում է լեզվական իրազեկություններ իրադրությունների համաձայն:

Մխալների վրա աշխատանքը գրելու ուղղությամբ

Գրավոր հանձնարարություններն անչափ կարևոր են ինչպես անմիջապես գրելու կարողությունների և հմտությունների, այնպես էլ ընդհանրապես լեզվական իրազեկությունների զարգացման համար: Գրելու գործընթացը խոսելու համեմատ ընթանում է համեմատաբար դանդաղ և պասսիվ գիտելիքի ակտիվացմամբ, քանի որ լեզու սովորողը/աշակերտը բավական ժամանակ ունի մտքի արտահայտման և յուրացրած նյութից գիտակցված ձևեր ընտրելու

համար: Այսպիսով, գրելիս թույլ տրված սխալները լավագույն ստուգիչն են գիտակցված գիտելիքի մակարդակով գոյություն ունեցած հիմնախնդրի բացահայտման համար: Եթե գրավոր խոսքում շատ են սխալները, սա բացահայտորեն ցույց է տալիս, որ լեզու սովորողների համար որոշ հարցեր դեռ չեն հաղթահարված: Այսպիսով, գրելիս թույլ տրված սխալների վրա նպատակաուղղված պետք է աշխատի ինչպես լեզու սովորողն, այնպես էլ ուսուցիչը:

Գրավոր հանձնարարությունների տեսքով աշակերտին հնարավոր է տարբեր աշխատանքներ տալ: Նրանցից յուրաքանչյուրը պահանջում են յուրահատուկ մոտեցում և աշխատանք: Նախ՝ պետք է նշել, որ մեծ նշանակություն է շնորհվում բոլոր սխալներին, իսկ հետագայում հստակորեն պետք է մատնանշեք ճիշտ ձևը կամ մտքի արտահայտման ճիշտ լեզվական միջոցները: Սա լավ միջոց է աշակերտների համար՝ իրենց սխալների վերլուծման համար

Տարրական աստիճանում արդյունավետ է **թելադրությունը**, քանի որ այն ի հայտ է բերում այն հիմնախնդիրները, որոնք դրսևորում են լսելու, հասկանալու ժամանակ և լեզվի հնչույթային կառուցվածքի, ուղղագրության իմաստավորման մակարդակն է բացահայտում: Թելադրությունը լավ կբացահայտի, թե ինչ հիմնախնդիրներ կան հմչյունների ընկալման և ճիշտ գրելու տեսանկյունից:

Գրավոր աշխատանքի տեսակներից են՝ նախադասություններ և տեքստեր կազմելը: Այս դեպքում դրսևորվում են քերականական հիմնախնդիրները, ինչը նույնպես պետք է դառնա սխալների ուղղման և վերլուծման հիմունք: Տեսքում, հատուկ տեղում, հստակորեն, կամ ավելի լավ է սխեմատիկորեն և ակներև կերպով, անպայման պետք է ընդգծվեն բոլոր սխալները՝ ճիշտ տարբերակի մատնանշումով:

Շատ էֆեկտիվ միջոց է աշակերտների կողմից **սխալների ուղղումը**: Դրա համար տեսքում պետք է առանձնացվի տեղ սխալների

ուղղման համար, որտեղ աշակերտը հենց ինքը կգրի սխալի փոխարեն ճիշտ տարբերակը:

Այսպիսով, սխալների վերլուծությունը գրավորի ուղղության մեջ այսպես կարող ենք ներկայացնել.

- Թելադրություն և նրա վերլուծում:
- Գրավոր առաջադրանք և նրա վերլուծում:
- Գրավորը ստուգելիս ընդգծվեն բոլոր սխալները՝ ճիշտ տարբերակի մատնանշումով:
- Առանձնացվի հատուկ տեղ սխալների ուղղման համար:
- Ստեղծվեն հատուկ առաջադրանքներ՝ տեքստերի տիպիկ սխալների վերլուծության համար:

Վերջում, մեկ անգամ ևս անդրադառնանք այն հարցերին, որ տրվեցին և հարցի նախատեսումով պատասխանենք նրանց:

Այսպիսով, սխալներն առանց արձագանքման չպետք է մնան, սակայն նրանցից յուրաքանչյուրին անհապաղորեն արձագանքումը կխափանի աշակերտի խոսելու պրոցեսը: Այդ պատճառով, ցանկալի է, որ ուսուցիչն իր մոտ նշի սխալները, դասակարգի դրանք և հետո վերլուծի դրանք: Լեզվի ուսսանման նախնական փուլում կարելի է միայն ակնարկվի ճիշտ ձևի մասին: Էֆեկտիվ կլինի նաև դիդակտիկ նյութերի,

առանձնապես գծապատկերների օգտագործումը: Լեզվական իրազեկությունների աճի հետ ցանկալի է, որ սխալները վերլուծվեն և դրանց մասին խոսեն: Սխալների դասակարգումից հետո ուսուցիչը լեզվի յուրացման պրոցեսում աստիճանաբար պետք է վերլուծի սխալները և դրանք փուլերով մատուցի դասարանին: Պարտադիր չէ սխալների ուղղմանը ամբողջ դասի գործընթացը տրամադրել կամ որոշակի հաջորդականությամբ տեղի ունենա նրանց արձագանքում: Ընդհակառակը, նրանց վերլուծությունը պետք է ունենա մեկնաբանության բնույթ: Պարտադիր է նաև հատուկ վարժություններ կազմել, որոնցում արդեն վերլուծված սխալները կտեղափոխվեն պրակտիկա: Սա մեկ անգամ ևս կբացահայտի այն, թե որքանով ճիշտ են կիրառում քննարկված ձևերը: Ցանկալի է, որ սխալներն ամբողջ դասարանի հետ վերլուծվեն և ոչ թե անհատապես, թեպետ գրելու ուղղությամբ սրան միևնույն է անհատական բնույթ է տրվում:

ABSTRACT

Nino Sharashenidze

Analysis of Mistakes and Working Them in Mastering a Language

In learning a language, mistakes are common enough and they call for due attention on the part of a teacher. The article highlights the ways mistakes are to be dealt with and the tasks facing a language teacher. It is important that the correction of mistakes does not create an obstacle to the development of the speaking skills or set up a psychological problem to a student. To this end, a teacher should take down and classify types of the mistakes made by the students and work on them during various activities or by means of the exercises. The author of the article also discusses the pronunciation and oral speech problems, grammar mistakes and those made in writing and the ways to correct them, with certain recommendations and relevant exercises given.